ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 10

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 07-Ի ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու 3-րդ նստաշրջանի 2023 թվականի փետրվարի 07-ի թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության փոխանցման ակտը հաստատելու մասին:

2. Հայաստանյայց առաքելական Սուրբ եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալական ֆոնդին դրամական աջակցություն ցուցաբերելու մասին:

3. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 191 որոշման 1-ին կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:

4. Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

5. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

6. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով որպես ընդլայնում օտարելու մասին:

7. Հողամասի գործառնական և նպատակային նշանակությունը փոխելու մասին:

8. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 209 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

9. Ծաղկաձոր համայնքի տեղական սոցիալական ծրագիրը հաստատելու մասին:

10. Դրամական աջակցություն տրամադրելու մասին:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 11

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ <<ՄԵՂՐԱԶՈՐ ԳՅՈՒՂԻ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> հիմնարկի հիմնական միջոցները և պաշարները Ծաղկաձոր համայնքի <<Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան մարզամշակութային կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցելու ակտը:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՄՐՆԵՊ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սույն փաստաթղթի համաձայն պետական
գրանցումը կատարված է Հայաստանի
Հանրապետության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
“_____”_____ _____ թ.

աշխատակից՝
_____ _____

Կազմված է 03.02.2023 թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 4 օրինակ
ՕՐԻՆԱԿ 4

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Ծաղկաձոր համայնքի
ավագանու
07.02.2023 թ. կայացած
թիվ 11 որոշմամբ
(արձանագրություն թիվ 2)

Համայնքի ղեկավար՝՝
_____

Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան
Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի
**գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին
վերաբերող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների**
Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան
Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ ին

ՓՈԽԱՆՑՄԱՆ ԱԿՏ

1. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ը հանդիսանում է Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի (գրանցված է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 28.02.2012 թ., գրանցման թիվ՝ 85.180.72531, հարկ վճարողի հաշվառման համար՝ 03006966, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ, Ծաղկաձո համայնք, Գ.Մեղրաձոր, 5-րդ փողոց, թիվ 9) իրավահաջորդը, որին փոխանցվում են Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկին պատկանող և սույն փոխանցման ակտում նշված ակտիվները և պասիվները, այլ իրավունքներն ու պարտավորությունները:

2. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին են փոխանցվում Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի ակտիվները և պասիվները հետևյալ հիմնական հաշվեկշռային ցուցանիշներով (07.02.2023 թ. դրությամբ, մնացորդային արժեք, ՀՀ դրամ).

Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԸ	ԱԿՏԻՎ	ՊԱՍԻՎ	ԾԱՆՈԹՈՒԹ.
	Հիմնական միջոցներ	4337700		Կետ 3
	Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	4337700		
	Պաշարներ	508800		Կետ 3
	Դեբիտորական պարտքեր չփոխանակվող գործարքների գծով	6000		Կետ 4
	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	61700		Կետ 4
	Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**576500**		
	Ընդամենը ակտիվներ	**4914200**		
	Զուտ ակտվներ Սեփական կապիտալ (կուտակված հավելուրդ և պակասուրդ)		**4914200**	
	ՀԱՇՎԵԿՇԻՌ	**4914200**	**4914200**	

3. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին են փոխանցվում Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի հիմնական միջոցները և պաշարները համաձայն հավելվածի:

4. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ին են փոխանցվում Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկի հակերի միասնական հաշվում առկա գումարը և դեբիտորական պարտքը դրոշմանիշային վճարների գծով:

5. Ծաղկաձոր համայնքի «Մեղրաձոր գյուղի Սամվել Մուրադյանի անվան Մարզամշակութային կենտրոն» հիմնարկը պարտավորություններ չունի:

Հավելված

ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

N	Հիմնական միջոցի նվանումը	Քանակը	Գինը	Գումարը
1.	Դաշնամուր	1	15300	15300
2.	Երաժշտական սարքավորումներ	1	522000	522000
3.	Էլ. սարքավորումներ	1	184600	184600
4.	Դահլիճի ջահ	4	950	3800
5.	Սեղան լամինատե	19	33000	627000
6.	Դիոլ	2	40000	80000
7.	Սեղան մեկ տումբանի	2	45000	90000
8.	Պահարան	3	65000	195000
9.	Պահարան	1	50000	50000
10.	Անկյունակ սեղան 4 մասից	1	70000	70000
11.	Պահարան	1	100000	100000
12.	Ամսագրի սեղան	1	30000	30000
13.	Ամսագրի սեղան	1	55000	55000
14.	Համակարգիչ	1	500000	500000
15.	Դրսի նստարան	5	100000	500000
16.	Բազկաթոռ մեծ սև	1	25000	25000
17.	Աթոռ սև	1	35000	35000
18.	Ձյուդոյի գորգ/կոմպլեկտ 16 կտորից/	1	500000	500000
19.	Մարմնամարզական գորգ	10	30000	300000
20.	Բազմոց անկյունակ	1	285000	285000
21.	Հրշեջ վահանակ գույքով	1	40000	40000
22.	Տոնածառ	1	100000	100000
23.	Պատի նկար մանկական աշխատանք	15	2000	30000
24.	Համակարգիչ Corel 5	1	Նվ.	0
25.	Համակարգիչ Corel 3	1	Նվ.	0
26.	Դյուրակիր համակարգիչ	1	Նվ.	0
27.	Պրոյեկտոր Benq MX	1	Նվ.	0
28.	Պրոյեկտոր AcerPL	1	Նվ.	0
29.	Ձայնային համակարգ	1	Նվ.	0
30.	Հոսանքի կարգավորիչ	1	Նվ.	0
31.	Տպիչ HP	1	Նվ.	0
32.	Բարձրախոս	1	Նվ.	0
33.	Ականջակալներ	1	Նվ.	0
34.	Հեռախոսի կանգնակ	1	Նվ.	0
35.	Բրոշ միկրոֆոն	1	Նվ.	0
36.	Մալուխ 10 մ	1	Նվ.	0

37.	Մալուխ 5մ	1	Նվ.	0
38.	Մալուխ 3մ	1	Նվ.	0
				4 337 700

ՊԱՇԱՐՆԵՐ

հ/հ	Պաշարի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Գինը	Գումարը
1	2	3	4	5	6
1	Դահլիճի աթոռներ	Հատ	*270*		
2	Ազգային տարազ	Հատ	*46*		
3	Բեմի գեղարվեստական նկար	Հատ	*2*		
4	Բեմի վարագույր	Հատ	*2*		
5	Գրադարակ երկաթյա	Հատ	*20*		
6	Էլ. ջեռուցիչ	Հատ	*7*		
7	Փափուկ աթոռ /սև/	Հատ	*8*		
8	Փոքր աթոռ/շագանակագույն/	Հատ	*12*		
9	Դրսի աղբաման	Հատ	*2*		
10	Աթոռ փափուկ /մարմնագույն/	Հատ	*13*		
11	Ծաղկաման փոքր	Հատ	*10*		
12	Դույլ մետաղյա	Հատ	*1*		
13	Փոցխ	Հատ	*1*		
14	Բահ	Հատ	*1*		
15	Թեյնիկ	Հատ	1	9300	9300
16	Դույլ պլաստմասե	Հատ	2	800	1600
17	Դույլ ցինկապատ	Հատ	1	1900	1900
18	Ծաղկաման փոքր	Հատ	10	650	6500
19	Սուրճի բաժակ	Հատ	1	3500	3500
20	Հյութի բաժակ	Հատ	1	2500	2500
21	Թաս	Հատ	1	1500	1500
22	Ծաղկաման մեծ	Հատ	1	4600	4600
23	Կրակմարիչ ԿՓ-3	Հատ	6	10000	60000

24	Տարհանման սխեմա	Հատ	2	10000	20000
25	Երկարացման լար	Հատ	2	1800	3600
26	Երկարացման լար	Հատ	2	3500	7000
27	Սանդուղք	Հատ	1	24000	24000
28	Ծառի մկրատ	Հատ	1	3500	3500
29	Ռետինե խողովակ	Մետր	20	700	14000
30	Հոսանքի կարգավորիչ	Հատ	1	6500	6500
31	Կիպիտելնիկ	Հատ	1	800	800
32	Տոնածառի լույս	Հատ	10	900	9000
33	Տոնածառի խաղալիք	Հատ	100	300	30000
44	Ճոպան	Մետր	10	300	3000
45	Քարթրիջ	Հատ	2	8000	16000
46	Կրակմարիչ ԿՓ-3	Հատ	6	10000	60000
47	Պլիտա	Հատ	10	22000	220000
48	Գրքեր	Հատ	5700		
49	Գրքեր նվիրատվություն	հատ	1100		
					508800

Տնօրեն_____Գ.Գոգոլյան

Հաշվապահ_____Լ.Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 12

ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԿՈՏԱՅՔԻ ԹԵՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի գրությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Կոտայքի թեմի սոցիալական ֆոնդին ցուցաբերել դրամական աջակցություն՝ 100 000 /մեկ հարյուր հազար/ Հայաստանի Հանրապետության դրամի չափով, մարզի խիստ կարիքավոր ընտանիքներին օգնություն ցուցաբերելու համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ / ՆԱՐԵԿ ՀԱՄՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 13

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 191 ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԹԻՎ 1-ԻՆ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 37-րդ հոդվածով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ուժը կորցրած ճանաչել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 14-ի <<Համայնքային սեփականություն համարվող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին>> թիվ 191 որոշման հավելվածի 1-ին կետը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -3

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ		ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ	
ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ		ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ	
ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ		ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ	
ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ			
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ			
ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ			
ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 14

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համայնքի կարիքների համար աճուրդային կարգով օտարել համայնքային սեփականություն համարվող հետևյալ հողամասերը՝ համաձայն հավելվածի:

2. Աճուրդը կազմակերպել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

Կողմ -10 Դեմ -0 Զեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու
2023 թվականի փետրվարի 07-ի թիվ 13 որոշման

ՑԱՆԿ
Աճուրդային կարգով օտարվող հողամասերի և մեկնարկային արժեքների

N	Հողամասի հասցեն	Չափը	Նպատակային և գործառնական նշանակությունը	Կադաստրային ծածկագիր	Մեկնարկային գինը
1	Կոտայքի մարզ,համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր քաղաք, Գլխավոր մարզահամալիր թաղամաս, թիվ 17/1	0.37799 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0026-0892	65 000 000 ՀՀ դրամ
2	Կոտայքի մարզ,համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր քաղաք, Սարալանջի փողոց, թիվ 46/1	0,55 հա	Հատուկ պահպանվող, հանգստի	07-005-0022-0584	58 000 000 ՀՀ դրամ
3	Կոտայքի մարզ,համայնք Ծաղկաձոր, Ծաղկաձոր քաղաք, Սարալանջի 1-ին փողոց, թիվ 3/1	0,0241 հա 0,14627 հա	Հատուկ պահպանվող, հանգստի, բնակավայրերի հասարակական կառուցապատման	07-005-0023-0358 07-005-0023-0357	20 000 000 ՀՀ դրամ
4	Կոտայքի մարզ,համայնք Ծաղկաձոր, գյուղ Մեղրաձոր	0.61165 հա	Գյուղատնտեսական, վարելահող	07-045-0356-0111	850 000 ՀՀ դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 15

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՈՐՊԵՍ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման 1-ին կետի 1-ին, 6-րդ, 7-րդ ենթակետերով և հիմք ընդունելով Սամսոն Արտաշեսի Գրիգորյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սամսոն Արտաշեսի Գրիգորյանին ուղղակի վաճառքով՝ որպես ընդլայնում օտարել իրենց ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, Ծաղկաձոր համայնք, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 102 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0020-0049/ 0.05 հա մակերեսով հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասին կից՝ Կոտայք, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձոր, Պահլավունյաց փողոց, թիվ 100/1 հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 07-005-0020-0152/ 0.02454 հա մակերեսով համայնքային սեփականություն համարվող՝ հատուկ պահպանվող հանգստի համար նախատեսված հողամասը:

2. Հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ 3 969 738 (երեք միլիոն ինը հարյուր վաթսունինը հազար յոթ հարյուր երեսուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հողամասի օտարումը իրականացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Կողմ -9 Դեմ -1 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

PRODUCED BY AN AUTODESK EDUCATIONAL PRODUCT



C:\Users\User\Desktop\գործեր\Dzghkadzor1220.dwg, 14.02.2023 15:37:33, DWG To

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 16

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 14.3 հոդվածով և հիմք ընդունելով 2006 թվականի նոյեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետության Կառավարության թիվ 1918-Ն որոշումը և Էրիկ Արմենի Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ Գայանե Հմայակի Եղիազարյանի դիմումը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզ, համայնք Ծաղկաձոր, քաղաք Ծաղկաձորում գտնվող Էրիկ Արմենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող (կադաստրային ծածկագիր 07-005-0020-0017) 0,14 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արոտավայրից փոխել և պատկերել որպես հատուկ պահպանվող, հանգստի համար նախատեսված հողամաս:

2. Սահմանել, որ հողամասի նպատակային նշանակության փոփոխության դեպքում անհրաժեշտ է վճարել հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ/ ՆԱՐԵԿ ՀԱՅՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 17

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 09-Ի ԹԻՎ 209 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարի 2007 թվականի հունվարի 26-ի թիվ 29 հրամանը, համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 109 որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի մարտի 01-ից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԼՍԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված 3
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022
թվականի դեկտեմբերի 09-ի թիվ 209
որոշման
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023
թվականի փետրվարի 07-ի թիվ 17 որոշման

ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

<<Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> Համայնային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2023 թվականի թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

Աշխատակիցների քանակը՝ 8

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Հաստիքի անվանումը	Հաստիքի տեսակը	հաստիքային միավորը	Պաշտոնային դրույքաչափը	Հավելումը	Հավելավճ	Աշխատավարձի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	<<Արտավազ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ	Տնօրեն		1	130,000			130,000
2		Մեթոդիստ ուս գծով տնօրենի տեղակալ		0.25	125,000			31,250
3		Հաշվապահ		0.5	125,000			62,500
4		Դաստիարակ		1.12	125,000			140,000
5		Դաստիարակի օգնական		1	125,000			125,000
6		ֆիզկուլտուրայի հրահանգիչ		0.25	125,000			31,250
7		երաշժտության դասատու		0.25	125,000			31,250
8		պարուսույց		0.25	125,000			31,250
9		բուժքույր		0.5	125,000			62,500
10		Տնտեսվար		0.25	125,000			31,250

11		Խոհարար		1	125,000			125,000
12		Օժանդակ բանվոր		0.25	125,000			31,250
13		Հավաքարար		0.5	125,000			62,500
14		Հնոցապան		0.5	125,000			62,500
		Ընդամենը		**7.62**				**957,500**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 18

ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի տեական սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Ծաղկաձոր համայնքի ավագանու 2023 թվականի
փետրվարի 07-ի թիվ 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ի.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Ծաղկաձոր համայնքի տեղական սոցիալական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի համատեքստում:

2. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության ծրագրերի առավել արդյունավետ իրականացման համար նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացահայտելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքիներին, աջակցել նրանց հայտնաբերելու և զարգացնելու կարիքների հաղթահարման սեփական կարողությունները, սոցիալական աջակցության տրամադրման հասցեականության բարձրացման միջոցով: Նպաստել համայքնում աղքատության հաղթահարմանը, զբաղվածության ապահովմանը, ընտանեկան բռնության և մանկալքության դեպքերի կանխարգելմանը, երեխաների իրավունքների պաշտպանությանը, երեխաների և երիտասարդների զբաղվածության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների համար առավել ներառական և հարմարեցված պայմանների ստեղծմանը, զոհված զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ դարձած զինծառայողների աջակցմանը, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը: Համագործակցել պետական, մասնավոր և հասարակական կառույցների հետ՝ նպաստելով բնակչության սոցիալական պաշտպանվածության բարձրացմանը:

3. Համայնքի ընդհանուր նկարագրությունը

Ծաղկաձոր համայնքում ընդգրկված են հետևյալ բնակավայրերը՝

Ծաղկաձոր

Մեղրաձոր-Գոռգոչ

Աղավնաձոր

Արտավազ-Փյունիկ

Հանքավան

Մարմարիկ

4. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծաղկաձոր համայնք (Կոտայքի մարզ) հարմարավետ կուրորտային համայնք է՝ 7393 բնակչությամբ: Այն գտնվում է Թեղենիս լեռան արևելյան լանջին, ծովի մակարդակից միջինը 1840մ բարձրության վրա: Մայրաքաղաք Երևանից Ծաղկաձոր համայնքը գտնվում է 60 կմ հեռավորության վրա: Ծաղկաձորից հյուսիս և հարավ ձգվող զառիթափ լեռնաշղթաները ծածկված են անտառներով:

5. Բնակչության թիվը ըստ բնակավայրերի՝

Բնակավայր	Վարչական տարածք /հա/	Բնակչության թիվ /ըստ բնակչության պետական ռեգիստրի (ենթակա է փոփոխման)/
Ծաղկաձոր	1618.29	1589
Մեղրաձոր-Գոռգոչ	12429	2711
Աղավնաձոր	3566	1274
Մարմարիկ	3144	758
Արտավազ-Փյունիկ	10638	949
Հանքավան	8141	112

II ԲԱԺԻՆ
ՏԵՂԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Համայնքի տեղական սոցիալական ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրներն են.

1) համայնքային մակարդակում ապահովել սոցիալական ծառայությունների համալիր և ամբողջական մատուցումը.

2) բարելավել սոցիալական ծառայությունների հասանելիությունը, մատչելիությունը և դրանց մատուցման համակարգումը.

3) սոցիալապես անապահով, խոցելի և հատուկ կարիքներ ունեցող անձանց հասարակություն ներառումն ապահովելը.

4)զուգակցել սոցիալական ոլորտի պետական քաղաքականության առաջնահերթությունները համայնքի առանձնահատկությունների ու կարիքների հետ.

5) բարձրացնել համայնքում առկա ռեսուրսների (այդ թվում ոչ պետական հատվածի) օգտագործման արդյունավետությունը.

6) նպաստել բնակիչների առողջական վիճակի բարելավմանը, երեխաների կրթության ապահովման միջավայրի ձևավորմանը.

7) աջակցել սոցիալապես անապահով խավերին դուրս գալու կյանքի դժվարին իրավիճակից.

8) նպաստել բնակչության կայուն զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

7. Համայնքի տեղական սոցիալական ծրագրի մշակման հիմնական սկզբունքներն են.

1) տեղական ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրին համահունչ լինելը.

2) համայնքի տեղական սոցիալական ծրագրի միասնական և ամբողջական լինելը (սոցիալական ծրագրում արտացոլվում են համայնքի սոցիալական ոլորտի հիմնական ուղղությունները).

3) քաղաքացիների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների մասնակցության ապահովումը.

4) համագործակցությունը և գործընկերությունը.

5) տեղական ծրագրի մշակման թափանցիկությունը և հրապարակայնությունը:

8. Տեղական ծրագրի մշակման հիմնական առանձնահատկություններն են.

1) ըստ սոցիալական խմբերի ծրագրավորում՝ համայնքի բնակչության սոցիալական կարիքների և առկա սոցիալական ծառայությունների միջև բացի լրացումը.

2) սոցիալական ծառայություններ տրամադրող պետական և ոչ պետական կազմակերպությունների կողմից սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացի ինտեգրում (սոցիալական ծրագրի մշակման ընթացքում, որպես սոցիալական ոլորտի հիմնական ուղղություններ դիտարկվում են առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության ենթաոլորտները).

3) տեղական սոցիալական ծրագրի հիմքում սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ենթածրագրերն են, որոնք հստակ նախանշում են տվյալ ծրագրի նպատակը, խնդիրները, արդյունքները, միջոցառումներն ու դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցները:

III ԲԱԺԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

9. Գնահատող հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում է հանձնաժողովում ընդգրկված սոցիալական աշխատողը:

10. Գնահատող հանձնաժողովը գնահատումն իրականացնում է հաշվի առնելով համայնքում սոցիալապես խոցելի յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչների առկայությունը, նրանց թվաքանակը և սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրները:

11. Սոցիալապես խոցելի հիմնական խմբերն են՝ երեխաները, տարեցները (65 տարեկանը լրացած անձինք), հաշմանդամություն ունեցող անձինք, կանայք, գործազուրկները, սոցիալապես անապահով կամ աղքատ ընտանիքները, մշտական բնակության վայր չունեցող կամ ժամանակավոր բնակության վայրում բնակվող ընտանիքները, վնասակար սովորություններից կախվածություն ունեցող անձինք, սեզոնային միգրանտները և նրանց ընտանիքները:

12. Կարիքների գնահատման գործընթացն ունի մասնակցային բնույթ, որն արտացոլում է իրավիճակի պահանջները, հնարավորություն ընձեռելով որոշելու հետագա քայլերի հրատապությունը և հաջորդականությունը:

13. Կարիքների գնահատման գործընթացը բաղկացած է հետևյալ փուլերից.

1) ըստ սոցիալական խմբերի կարիքների գնահատում՝ կարիքների գնահատումը բացահայտում է սոցիալական խնդրի էությունը, տարածվածությունն ու խորությունը, ինչպես նաև դրանց առաջացման վտանգը՝ ռիսկային գործոնները.

2) համայնքի սոցիալական կարիքների և համայնքում մատուցվող սոցիալական ծառայությունների համեմատություն, դրանց ծածկույթի, վերածածկի և(կամ) բացերի բացահայտում:

14. Կարիքի գնահատման համար գնահատող խմբի (սոցիալական աշխատողի) կողմից հավաքագրվում է համայնքի վիճակագրական տվյալները:

15. Համայնքի վերաբերյալ անհրաժեշտ վիճակագրական հիմնական տվյալները հետևյալներն են.

1) համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակը՝ 7393, սեռատարիքային կազմը՝ տղամարդիկ՝ 3609, կանայք՝ 3784.

ա. մինչև 18 տարեկան երեխաների թվաքանակը՝ 1649, այդ թվում՝ աղջիկները՝ 793.

բ. աշխատունակ տարիքի անձանց թվաքանակը՝ 4914, այդ թվում՝ կանայք՝ 2919.

գ. 65-75 տարեկան անձանց թվաքանակը՝ 604, այդ թվում՝ կանայք՝ 336.

դ. 75 տարին լրացած և ավելի բարձր տարիքի անձանց թվաքանակը՝ 293, այդ թվում՝ կանայք՝ 195.

2) համայնքի ընտանիքների (ծխերի) թվաքանակը՝ 1973.

3) գործազուրկների, աշխատանք փնտրող զբաղված անձանց թվաքանակը՝ 602, այդ թվում՝ կանայք՝ 359.

4) ժամանակավոր աշխատանքի մեկնած անձանց թվաքանակը, այդ թվում՝ կանայք.

5) հաշմանդամություն ունեցող անձանց (1-ին, 2-րդ և 3-րդ խումբ) թվաքանակը՝ 224,

6) կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստ ստացող ընտանիքների թիվը՝ 254, այդ թվում՝ ընտանեկան նպաստ՝ 150.

7) կենսաթոշակառուների թիվը՝ 896,

16. Տեղեկատվության հավաքագրումից հետո այն համակարգվում է վերլուծության համար, համադրելով տարբեր աղբյուրներից, տարբեր մեթոդների և գործիքների միջոցով ստացված տեղեկատվությունը:

17. Տեղեկատվության վերլուծությամբ բացահայտվում են.

1) համայնքում առավել կարիքավոր/խոցելի խմբերը, որոնք հետագայում սոցիալական ծրագրում ներգրավվում են, որպես սոցիալական աջակցության կարիք ունեցողներ.

2) համայնքում առկա ռիսկային համարվող գործոնները,

3) սոցիալապես խոցելի խմբերի աշխարհագրական տեղաբաշխումը.

4) խոցելի խմբի ներկայացուցիչների սոցիալական իրավունքների այն խումբը, որոնց իրացումը սահմանափակված է կամ ոտնահարվում է:

18. Վերլուծության արդյունքների հիման վրա.

1) կազմել հարցադրումների ցանկը՝ ֆոկուս-խմբային քննարկում կազմակերպելու համար մարդկանց այն խմբի հետ, ովքեր կիսում են ընդհանուր իրավիճակը կամ կրում են տվյալ սոցիալական կարիքը.

2) կազմակերպել հանրային քննարկումներ ,որոնք բաց են և դրանց կարող են ցանկության դեպքում մասնակցել համայնքի բնակիչների բոլոր խմբերի ներկայացուցիչները (կարևորվում է հանրային քննարկումների յուրաքանչյուր մասնակցի կարծիքը), որոշումներն ընդունվում են խորհրդակցական և համագործակցային եղանակով, որոնք ներկայացվում են գնահատող խմբին:

19. Ընդունված որոշումները վերաբերում են ինչպես համայնքի սոցիալական կարիքներին, այնպես էլ համայնքի հնարավոր ռեսուրսներին՝ տնտեսական, ֆինանսական, աշխարհագրական (բնական՝ գետ, անտառ, լիճ և այլն), մարդկային (մասնագետներ) և այլն:

20. Հավաքագրված տվյալները մշակվում են և վերլուծվում՝ առանձնացնելով առավել տարածված և հրատապ միջամտություն պահանջող սոցիալական կարիքները, որոնք համադրվում են դրանց լուծմանն ուղղված առկա սոցիալական կառույցների կողմից մատուցվող ծառայությունների ծավալի և տեսակների հետ, գնահատվում է նաև հասարակության տարբեր խմբերի համար տվյալ ծառայությունների հասանելիությունը և մատչելիությունը:

21. Գնահատող խմբի կողմից սահմանվում են ինչպես այն խոցելի խմբերը և այն սոցիալական կարիքները, որոնց սպասարկմանն ուղղված ծառայությունները գոյություն չունեն, անհասանելի են կամ չեն բավարարում առկա պահանջարկը, այնպես էլ այն ռեսուրսները, որոնց միջոցով հնարավոր է լուծել խնդիրները:

22. Կատարված աշխատանքների արդյունքում գնահատող խումբը կազմում է հաշվետվություն, որը ներառում է՝

1) համայնքի սոցիալական կարիքների գնահատման գործընթացի համառոտ նկարագիր,

2) միջոցառումների ժամանակագրությունը՝ սկզբնական հանդիպումներից մինչև վերջնական հաշվետվության մշակում.

3) համայնքի ընդհանրական նկարագրությունը.

4) հանրային քննարկումների ընթացքում քննարկված հարցերը.

5) համայնքի սոցիալական կարիքների գնահատման փուլերը, արդյունքները՝ նկարագրված կարիքները, և եզրակացությունը.

6) սոցիալապես խոցելի խմբերի սահմանումը (նույնականացումը), նրանց կարիքների վերլուծությունը,

7) հետազոտության մասնակիցների կողմից առաջադրված համայնքի 5-10 ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև առնվազն առաջնահերթ հինգ ծրագրային ուղղությունները.

8) կարիքների բավարարմանն ուղղված առաջարկություններ, որոնք պետք է լինեն իրատեսական, իրագործելի և կարող են հանգեցնել ծրագրային փոփոխությունների:

23. Գնահատման հաշվետվությունը ներկայացվում է համայնքի ղեկավարին:

IV ԲԱԺԻՆ
ՏԵՂԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԵՎ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

24. Սոցիալական ծրագրի մշակման ողջ գործընթացում ուշադրության և քննարկման առարկա են.

1) համայնքի բնակչության ակտիվացումը.

2) կայուն զբաղվածության ապահովումը.

3) արտադրության (գյուղատնտեսության) զարգացումը.

4) համայնքի բնապահպանական վիճակը.

5) բնակչության կենսական կարիքների բավարարմանն ուղղված համայնքային ծառայությունների զարգացումը.

6) բնակարանային ֆոնդի վիճակը.

7) համայնքում հանգստի կազմակերպումը, զվարճանքի վայրերը և միջոցները.

8) համայնքի բարեկարգման անհրաժեշտությունը, ընդհանուր տեսքը:

25. Սոցիալական ծրագիրը կազմելիս աշխատանքային խումբն ուղղորդվում է հիմնականում հետևյալ հարցերով.

1) բնակչության ո՞ր խմբին պետք է ուղղվի ծրագիրը.

2) ի՞նչ ծառայություններ այն պետք է ներառի.

3) ծառայությունների մատուցման ի՞նչ մեխանիզմներ են առկա.

4) ծառայությունների իրականացման ո՞ր մեխանիզմներն են լավագույնը.

5) ինչպե՞ս կարող է ծրագիրը բավարարել թիրախ խմբի կարիքները.

6) ինչպե՞ս պետք է կազմակերպվի ծրագրի իրականացումը.

7) ի՞նչ ռեսուրսներ են անհրաժեշտ համապատասխան ծրագրի իրականացման համար.

8) որտեղի՞ց կարելի է հայթայթել այդ ռեսուրսները (պետություն, համայնք, միջազգային դոնոր կազմակերպություններ, Հայ Առաքելական Եկեղեցի, հասարակական կազմակերպություններ, անհատ բարերարներ և այլն):

V ԲԱԺԻՆ
ԾՐԱԳՐԵՐԻ (ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ) ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

26. Ծրագրերի (ծրագրերի նախագծերի) առաջնահերթությունները որոշում է աշխատանքային խումբը, հաշվի առնելով նաև գնահատման հաշվետվությունը, դրանում առկա առաջարկությունները:

27. Առաջնահերթությունները որոշվում են բալային համակարգով ծրագրերի (ծրագրերի նախագծերի) գնահատման միջոցով՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները՝

1) հանրության աջակցություն.

2) իրագործելիություն.

3) ուղղակի և անուղղակի հաճախորդների թիվ.

4) հարատևություն (կենսունակություն).

5) ազդեցություն անապահով խավերի վրա, աղքատության նվազեցում.

6) ազդեցություն ներգաղթի կամ արտագաղթի կանխարգելման վրա.

7) բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացում.

8) համայնքի կարողությունների հզորացում.

9) բնակչության սոցիալական ներդաշնակության ապահովում.

10) ծառայությունների մատչելիության ապահովում.

11) ծառայությունների հասանելիության ապահովում:

28. Յուրաքանչյուր ծրագիրը գնահատվում է առանձին, գնահատող խմբի բոլոր անդամների կողմից:

VI ԲԱԺԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

29. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության ծրագրերի առավել արդյունավետ իրականացման համար նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացահայտելու կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց և ընտանիքիներին, աջակցել նրանց հայտնաբերելու և զարգացնելու կարիքների հաղթահարման սեփական կարողությունները, սոցիալական աջակցության տրամադրման հասցեականության բարձրացման միջոցով: Նպաստել համայքնում աղքատության հաղթահարմանը, զբաղվածության ապահովմանը, ընտանեկան բռնության և մանկալքության դեպքերի կանխարգելմանը, երեխաների իրավունքների պաշտպանությանը, երեխաների և երիտասարդների զբաղվածության ապահովումը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների համար առավել ներառական և հարմարեցված պայմանների ստեղծմանը, զոհված զինծառայողների ընտանիքների, հաշմանդամ դարձած զինծառայողների աջակցմանը, կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովմանը: Համագործակցել պետական, մասնավոր և հասարակական կառույցների հետ՝ նպաստելով բնակչության սոցիալական պաշտպանվածության բարձրացմանը:

30. Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվում է սոցիալական կարիքների գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություն տրամադրելու սկզբունքի վրա՝ միաժամանակ խրախուսելով քաղաքացու սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Աշխատունակ յուրաքանչյուր քաղաքացու աշխատանքի քաջալերումը, խրախուսումը և այս նպատակով անձի հմտությունների և հնարավորությունների զարգացումը պետության սոցիալական քաղաքականության առանցքն են: Սոցիալական պաշտպանության ոլորտում համայնքն աջակցում է պետական սոցիալական իրագործմանը, ինչպես նաև կազմակերպում և իրականացնում է տեղական անհատական սոցիալական ծրագրերի մշակումը, իրականացնում է սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության հաշվառումը:Իրականացվող աշխատանքների ռազմավարությունը ուղղված է համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորմանն ու պահպանմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման ապահովման ուղղություններն են՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքները և արժանապատվությունը, նրանց լիակատար ներառումը հասարակության մեջ, մատչելի պայմանների, որակյալ ծառայությունների առկայությունը և դրանցից օգտվելու հնարավորությունները: Ձեռնարկել միջոցներ տեղահանված ընտանիքների ինտեգրման ուղղությամբ՝ հաշվի առնելով նրանց սոցիալական խնդիրները: Տարեցների սոցիալական պաշտպանության ոլորտում գործող սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգը բավարար չէ, և տարեցներին տրամադրվող սոցիալական ծառայությունները բաշխվել են անհամաչափ: Տարեցների իրազեկվածությունը սեփական իրավունքների և գործող ծառայությունների վերաբերյալ ցածր է: Տանել աշխատանքներ ուղղված տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը:

31. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունն իրականացվում է համաձայն Ծաղկաձոր համայնքի ավագանու «Ծաղկաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոսները հաստատելու մասին» որոշմամբ:

32. Համայնքի կամավոր խնդիրներ են սահմանվում՝

1) համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցությունը.

2) առողջական խնդիրներ և բուժման կարիք ունեցող բնակիչներին աջակցություն,

3) արտակարգ իրավիճակից (բնական, տեխնածին աղետ) տուժած բնակչին (ընտանիքին) աջակցություն,

4) բազմազավակ ընտանիքներին աջակցության,

5) ծառայության ընթացքում զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների անապահով ընտանիքներին աջակցությունը,

6) Հայրենական մեծ պատերազմի և արցախյան պատերազմի մասնակիցներին և հաշմանդամներին աջակցություն,

33. Համայնքի ղեկավարը համագործակցում է աջակցող ցանցի հետ:

34. Համայնքի ղեկավարն աջակցում է սոցիալական աջակցության պետական ծրագրերի իրականացմանը դրանց հասցեականության մեծացման հարցում՝ հայտնաբերելով համայնքի առավել աղքատ, ինչպես նաև սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ոչ աղքատ ընտանիքներին:

35. Համայնքի ղեկավարն իր աշխատակազմի ուժերով կամ աջակցող ցանցի հետ համատեղ կազմակերպում է տնային այցելություններ և հնարավորության դեպքում լուծում տալիս տվյալ ընտանիքի կամ անձի սոցիալական խնդիրներին:

36. Համայնքի ղեկավարը տարածքային մարմնի մասնագիտական աջակցությամբ կազմակերպում է համայնքի սոցիալական կարիքների գնահատման հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման, ընդունման և դրանց իրականացման գործընթացը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 փետրվար 2023 թվականի թիվ 19

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի թիվ 5-Ն հրամանով սահմանված հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և Հեղնար Սուքիասյանի կողմից ներկայացված դիմումը և փաստաթղթերը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հեղնար Միշայի Սուքիասյանին տրամադրել դրամական աջակցություն՝ 200 000 /երկու հարյուր / Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ իր հայրիկի՝ Միշա Հրաչիկի Սուքիասյանի շարունակական բուժման և առողջական խնդիրները լուծելու համար:

Կողմ -10 Դեմ -0 Չեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԱՐՄԵՆՈՒՀԻ

ԱՍԱՏՐՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱՂՐԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՈՍԿԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀՄԱՅԱԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ

ՂԱՐԻԲՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՅՈՒՐԱ

ՄԵԼՈՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ